

ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՆԱԽԱԿՆԵՐԸ ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ

Հայ անվանի բանասեր, արվեստարան Գարեգին Հովսեփյանը թողել է հարուստ և արժեքավոր գիտական ժառանգություն:

Դեռևս էջմիածնի Գևորգյան ճեմարանում ուսանելու շրջանում Հովսեփյանը զբաղվել է բանահավաքչական աշխատանքներով, Ապարանի և շրջակա գյուղերի բնակիչներից, վանքի մոկացի ծառաներից ուրի առնելով բանահյուսական արժեքավոր նյութեր, որոնք անսպառ աղբյուր են հանդիսացել հայ ժողովրդական լեզուագիտության ուսումնասիրության համար:

Իր կյանքի և երկարատև գիտական գործունեության ընթացքում Գ. Հովսեփյանը նամակագրական կապերի մեջ է եղել հայ և օտար անվանի գիտնականների հետ: Վերջիններիս հղած և նրանցից ստացած նրա նամակները նշանակալից արժեք են ներկայացնում գիտնականի կատարած հայագիտական աշխատանքների և հայ մշակույթին նվիրված նրա գործունեության լուսաբանման համար:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվում է Դ. Հովսեփյանի արխիվից մի փոքրիկ մասը, որը վերաբերում է Ամերիկայի հայոց թեմի նրա առաջնորդության ժամանակաշրջանի գործունեությանը: Այն Հայաստան բերեց ու թանգարանին՝ «չորս» գրող, մշակութային գործիչ Հակոբ Ասատուրյանը: Բացի այդ, թանգարանի տարբեր ֆոնդերում պահվում են Գ. Հովսեփյանի՝ Գարեգին Լեոնյանին, Կարապետ Կոստանյանին, Ղազարոս Աղայանին, Գյուտ Աղանյանին, Մկրտիչ Բարխուդարյանին, Գրիգոր Խալաթյանին, Արշակ Զուպանյանին և այլոց հղած նամակները, որոնց թիվը հասնում է շուրջ ութ տասնյակի:

Գ. Հովսեփյանի և Ա. Զուպանյանի նամակագրական կապը շորս տասնամյակի պատմություն ունի (1909—1949 թթ.): Այն շոշափում է հետաքրքիր խնդիրներ, որոնք սերտ առնչություն ունեն երկու նշանավոր գործիչների մշակութային-գիտական գործունեության հետ:

Ստորև հրատարակության ենք ներկայացնում այդ նամակներից 13-ը:

Գ. Հ. ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

№ 1

1909, հոկտ. 4. Ս. էջմիածին

Հարգելի բարեկամ

Պարոն Ա. Զոբանյան

Ձեր խնդրած լուսանկարներն այնքան ուշացրի, որ համբերություններիդ հատած՝ նամակ դրեցիք: Ուշացնելուս պատճառը մասամբ գուշակած եք, կ'կամենայի մի փոքրիկ հոգված ևս կցել պատկերներին, թեև ցարդ չհաջողվեց ինձ: Ներկայիս ուղարկում եմ միայն պատկերները, եթե չկարողացա հոգված պատրաստել, կ'ուղարկեմ անշուշտ, համառոտ տեղեկություններ այն ձեռագրերի մասին, որից հանված են այդ պատկերները¹: Դուք նշանակեցեք վերջնական ժամանակը, երբ հարկավոր կ'լինին այդ տեղեկությունները:

Այս ամբողջ ամառ, մայիսն էլ հետը, զբաղված էի մասամբ վանահայրական պարտավորություններով², բայց առավելապես հնագիտական խուզարկություններով և պեղումներով: Կարող եմ Ձեզ էլ մասնակից անել ուրախությանս:

աշխատանքս ու որոնումներս եղան սպասածիցս շատ ավելի արդյունավոր, որ կատարել էի Մառի հանձնարարությամբ: Հին Քասաղում կամ Բաշ-Ասպարանում զիտություն համար ի հայտ ածվեցավ Հայոց հնազույն եկեղեցիներից մեկը, Տեկորի և Երեբրուբի ոճով բաղիլիկա, թեև ավելի սլարդ, բայց արխաիկ և դնա-հատելի բարձրաբանդակներով և սլաշտաձև կամարներով: Նույն ավանում գտնվեցավ և մի հունարեն արձանադրություն Տրդատ թագավորի՝³ անվան հետ կապված, մի բարձրաբանդակ կենդանու գլխով և մարդկային մարմնով: Մի այլ դյուղում լուսանկարեցինք Դավիթ Գնթունու ղերեղմանի արձանադրու-թյունը՝⁵ պատմական աշխարհադրության համար կարևոր մի հիշատակարան և այլն: Երեք շաբաթ էլ զբաղված էինք Մառի և մի այլ ուս գիտնականի հետ «Տրդատա հովանոցի»⁶ պեղումներով: Իմ մասն էր հավաքել քրիստոնեական շրջանի հիշատակարաններն ու արձանադրությունները: Հավուց թառում՝ հա-վաբեցի բավական մեծ քանակությամբ մինչև այժմ անհայտ արձանադրու-թյուններ, մի քանիսը պատմական կարևոր նշանակություն ունեցողներ: Այդ վանքը հետաքրքրում էր ինձ և Գրիգոր Մազիստրոսի՝⁸ հետ ունեցած առնչու-թյամբ: Ի դեպ, նրա նամականիքը և տաղաչափականներն արդեն համեմատ-ված են և հավանորեն այս ձմեռ կսկսվի տպագրվել Պետերբուրգի Գիտությունց անմարանի հաշվով՝⁹:

Վերջին ամիս ու կեսն զբաղված էինք օծման նախապատրաստություննե-րով, տոներով և ժողովներով՝¹⁰: Արդեն մեր էջմիածնի կյանքն սկսում է բնա-կան ընթացքի մեջ մտնել: Վեհ. Հայրապետը՝¹¹ լուրջ և խոհեմ մարդու տպա-վորություն է թողնում. անձամբ հետաքրքրվում է Աթոռի և եկեղեցու գործե-րով, բայց ղեռ ևս տեղական պայմաններին ընտելացած չէ, լավ չէ ճանաչում և շրջապատող անձնավորություններին. մի քանի սխալներ գործվել են արդեն, որ երբեք ցանկալի չէին, հատկապես Հայրապետի գործունեության սկզբում: Դիվանի կազմակերպության մասին էլ լսած կ'լինեք լրագիրներից՝¹², կաշխա-տենք խղճով և անաշուկությամբ գործակցել մեր Հոգևոր Տիրոջ, և երբ տես-նենք, որ այլևս անհնարին է, առանձնության և զիտնական աշխատության դուռը միշտ բաց է:

Լսել եմ Ձեր տկարության և ապաքինման մասին. կցանկամ, որ այսու-հետև այդպիսի փորձությունների չենթարկվիք, այլ առողջ մարմնով և զվարթ հոգով շարունակեք Ձեր օգտակար գործունեությունը մեր արվեստի և դրա-կանության խոսքն դաշտում: Հարգանացս հետ ընդունեցեք բարեկամական ողջուններս:

Ձեր խ. Գաբեգին վարդապետ Հովսեփյան

№ 2

1911, ապր. 26, Ս. էջմիածին

Սիրելի բարեկամ

պ. Ա. Չոբանյան

Ձեր երկու նամակները հանձնարարականներով ստացել եմ. ներողությու-ն եմ խնդրում, որ այժմ հնարավորություն չունեի ձեռք տալու: Մանրանկարչա-կան արվեստի մասին մի դասախոսություն եմ պատրաստել Բաղվում կար-դալու: Երկու ամիս ամբողջ դորանով էի զբաղված. այդ դասախոսության հա-

ջողության մեծ նշանակութիւնն եմ տալիս իմ գործի հաջողության համար: Երկու շաբաթից առաջ արդեն պատրաստ էր, բայց պոկվել չէի կարող, էլի դորանով էի զբաղված, փոփոխելով, կրճատելով կամ ավելացնելով: Այսօր արդեն ճանապարհ եմ ընկնում. ամսույս 30-ին դասախոսութիւնն է. մինչև մայիսի 5-ը այստեղ կլինեմ և առաջին գործս կ'լինի հողվածը գրել, նյութը պատրաստ է և աղբյուրները հայտնի, և ձեռագիրների մասին հարկավոր տեղեկութիւնները տալ:

Պատկերները չկարողացանք պատրաստել, լուսանկարչի երկար և ծանր հիվանդ լինելու պատճառով. նոր ոտքի է կանգնել և խոսք է տվել վաղը անպատճառ գնալ նկարելու Տիրայր հայր սուրբը կ'հսկե՞ս, նա էլ պատրաստվում է շուտով քիչնե մեկնելու:

Ցանկամ Ձեզ ի սրտե առողջութիւն: Բարեկամական ողջույններով

Ձեր Դարեգիմ վարդապետ

№ 3

1912, հուլիս 22, Ս. էջմիածին

Մեծարգո՝ բարեկամ

պ. Ա. Չոբանյան

Ժամանակին շնորհակալութեամբ ստացել եմ «Հայ էջեր»¹ և մեծ բավականութեամբ կարդացել, բայց աստանդական կյանքիս պատճառով նոր էս Ձեռ տեղեկացնում այդ մասին: Ես Ձեռ առաջ մեղաւոր չի, «Ամենափրկչի»² հողվածի պատճառով, բայց Հայկ Դադյանի³ վարմունքով միանգամայն ամոթով մնացի Ձեզ մոտ: Երուսաղեմ գնալիս համարյա պատրաստ էին պատկերները և խոստացա ուղարկել Ձեզ անմիջապէս: Վերադարձիցս հետո Ձեր նամակի հիման վերա, երբ հանդիմանութեամբ դիմեցի նորան, հավատացրեց ինձ, թե ուղարկել է Ձեզ և փոստից ապահովագիր ունի:

«Հայ էջեր»ը կարդալուցս հետո, երբ զայրույթ հայտնեցի, հավատացրեց նորից, թե ուղարկել է և կամենում է փոստային վարչութեան դեմ գանգատվել և տուգանք պահանջել: Այժմ էլ հավատացնում է, որ Ձեզ մի սյուրպրիզ պիտի անե, էջմիածնի հնութեանց պատկերների մի մեծ ժողովածու ուղարկելով:

«Անահտի»⁴ դադարումը զգալի կորուստ էր հայ գեղարվեստական-գիտական մամուլի համար: Կ'ցանկամ Ձեզ, որ ուրիշ ճանապարհներով և միջոցներով այդ պակասը լրացնել կարողանաք:

Իմ աշխատութիւններն էլ հետզհետե առաջ են գնում. «Պոռչյանց հիշատակներ»-ից մի հատված⁵ հողվածի ձե տալով տպագրեցի «Գեղարվեստի» մեջ⁶: Արտատպութիւնն ուղարկում եմ Ձեզ: Ամբողջութեան համար նյութական միջոց չունիմ դեռ: Հիշատակարանների ընդարձակ ժողովածու՝ աշնանից կսկսվի տպագրվել Պետերբ. <ուրգի> Գիտութեանց անսարանի հաշվով, Մառի խմբագրութեամբ:

էջմիածնի գիտական ժողովածուի համար, տառերի գյուտի 1500 ամյակի առթիվ պատրաստում եմ հնագրական մի ընդարձակ ալբոմ, որ գաղափար տար հայ գրերի պեսպեսութեանց և զարգացման մասին է-ժ'ը դար⁸:

Աշնանից կսկսվի տպագրվել մանրանկարչական ալբոմը, Բերլինում⁹:

Այսպիսով միանգամից այնքան գործ եմ սկսել, որ եթե ծանրութեան տա-

կը չմնամ, լավ է: Բայց այսպես է բնավորությունս:

Հուսամ թե Ձեր առողջությունը այժմ լավ է, որի համար աղոթող եմ: Ուրախ կլինիմ, երբեմն Ձեր մասին երկտողներով տեղեկություն լսել:

Սիրալիր ողջուններով

Ձեր Դարեգին վարդապետ

№ 4

<1914, մայիս 20, Բեռլին>

Սիրելի պարոն Չոբանյան

Նախ ջերմ և սիրալիր ողջուններ, բայց ոչ էջմիածնի սրբազան վայրերից կամ Մասյաց ստորոտներից, այլ Բերլինից, ուր եկել եմ մանրանկարչական աշխատության քարտեղը տպագրության տալու:

Մասեհյան հանին² այցելություն արած ժամանակ, կարդաց Ձեր նամակը Հովասափ Սեբաստացու³ ձեռքով գրված Աղեքսանդրի վարուց մանրանկարների մասին⁴։ Ինձ համար ավելի դյուրին էր Ձեր խնդիրքը կատարել, մանավանդ աշխատում եմ ինքս Ձեռագիրների բաժանմունքում, ուստի և սիրով հանձն առա կատարել այն: Ընտրված են արդեն պատկերները, շուտով նկարել կտամ և չափագրության, հարկավոր տեղեկությունների և հիշատակարանների արտագրության հետ կուղարկեմ Ձեր հասցեով:

Այս ձեռագիրը հետաքրքրական է և այլ և այլ կողմից. այստեղ հավաքված են նույն Հովասափի տաղերն ու վկայաբանությունները, որ սիրով արտագրել կամ լուսանկարել <տալով> հետս էջմիածին կտանեի, եթե Ձեր կամ ուրիշի կողմից ուսումնասիրված չէ և մտադրված հրատարակելու. հաճեցեք, խնդրեմ, երկտողով հաղորդել ինձ, եթե որևէ բան դիտեք⁵:

Դեռ մի քանի օր այստեղ եմ. ապա կայացի՞ք պիտի անցնիմ տպագրության գործի ցուցահանդեսը դիտելու և հարմարագույն տպարան ընտրելու: Եթե շուտ պատասխանելու լինիք, գրեցեք ծրարի երեսին տպագրված հասցեով, ապա թե ոչ Berlin — Wilmersdorf, Brandenburgische 51₂—22 I, Dr. James Greenfield-ի հասցեով, ինձ կուղարկե, որտեղ էլ լինիմ:

Սիրալիր ողջուններով

Ձեր Դարեգին վարդապետ

№ 5

<1914, մայիս 25, Բեռլին>¹

Առ պարոն Ա. Չոբանյան

ի Փարիզ

Սիրելի բարեկամ, Ձեր պատվական նամակն ստացա. ուրախ եմ ի սրտե Ձեր նոր հրատարակելիք աշխատության համար: Հովասափի պատկերների համար արդեն կարգադրություն եղած է, խոստացել են այս շաբաթվա վերջին արտատպություններն հանձնել²։ Կուղարկեմ Ձեզ մի մի օրինակ, որպեսզի նորից նկարել տալու ավելորդ ծախսը չունենաք: Հետաքրքրական էր ինձ համար նաև ներսես Մեծի³ վարքի նկարազարդությունը, որից դարձյալ երեք պատկեր լուսանկարել եմ տվել: Ուրախ եմ, որ Հովասափի ամբողջական ուսումնասի-

րություն կտաք. այդ ձեռագրի մեջ կան հարկավոր նյութերը, որ անհրաժեշտ են մի հեղինակի հասկանալու համար. կա նույնիսկ նորա հոր կենսագրությունը, հոր երկու թե երեք տաղերը⁴: Բնձ համար ևս մանրանկարչական տեսակետով փոքր ինչ օգտակար եղավ այդ ձեռագիրը. այնտեղ կա ի միջի այլոց մի հատված սրբոց լուսո պսակների (nothbus) մասին:

Մանրանկարչական աշխատությանս պատկերներն ցույց եմ տվել այստեղ երկու նշանավոր գործարանների ներկայացուցիչներին. պատկերների համար միայն ծախս պահանջվում է 35000 մարկ: Այսօր պիտի հանձնեմ նոցանից մեկին վերջնական նախահաշիվ կազմել գործն ավելի մանրամասն ուսումնասիրելուց հետո. նույն փորձը կանեմ և լայպցիգում, ուր մտադիր եմ այցելել տպագրության ցուցահանդեսը և ավելի ի մոտո ծանոթանալ տպագրության արվեստի նշանավոր արտագրությունների հետ: Պ. Մակլերի⁵ նամակը հետաքրքրական կլինի, շատ ողջույններ իրեն, եթե հաճի, թող գրե լայպցիգ post restante կստանամ: Կ'կարողանա՞մ արդյոք գործը զուխ հանել պատվավոր կերպով, հավատում եմ, թե Աստված, որ հաջողել է մինչև այստեղ, կշարունակե յուր շնորհը նաև այսուհետև. գործը մեծ է և պատասխանատու ինձ նման նյութապես և մտավորապես խեղճ վանականի համար. բայց սիրո այն կայծը, որ ունիմ իմ սրտում դեպի հայրենի արվեստն ու քաղաքակրթությունը, պահում է ինձ հուսահատությունից: Պահանջված գումարի 2/3-ն ունիմ միայն պատրաստ, հուսամ, թե այստեղից հնարավոր պիտի լինի իմ մեկենասներից մեկին համոզել պակասը լրացնելու: Մանրամասնություններ հաղորդելու առիթ կ'ունենամ. խնդրեմ մի դանդաղեք գրել երբեմն, որպեսզի այս հեռավոր անկյունում ինձ շատ մեծակ չզգամ: Կարող եք հենց այս հյուրանոցի հասցեով գրել, մինչև լայպցիգից կհաղորդեմ տեղս, սոքա անկորուստ կհասցնեն ինձ:

Շատ ցավում եմ, որ վերջին աշխատություններիցս⁶ մոտո չունիմ այժմ Ձեզ ուղարկելու, կմնա վերադառնալուց հետո: Մանրանկարչականից զատ ձեռնարկել եմ և գրչության արվեստի ուսումնասիրության. հրատարակվել է այս վերջին աշխատության նյութը՝ «Քարտեզ հայ հնագրության» վերնագրով, 95 տախտակի մեջ 150 պատկերով: Ամբողջ աշխատությունը երեք մասից է բաղկացած. Քարտեզը գ. մասն է. առաջին մասն էլ պատրաստ է տպագրության, թե այս տարի հնարավոր չեղավ տպագրությունը վերջացնել, կմնա եկող տարվա սկիզբները⁷: Այդ կախված կլինի մասամբ մեր «Շողակաթ»-ի⁸ մշտատե և պարբերական դարձնելուց, որի համար Ս. կաթողիկոսը խոսք է տվել, բայց իմ հեռանալով կարգադրությունը մնաց:

Սիրալիր ողջույններով

Ձեր Գաբրիել վարդապետ

№ 6

<1914, մայիս 27, Բեռլին>¹

Սիրելի բարեկամ

Պ. Չոբանյան

Արդեն ուղարկել էի Ձեզ երկրորդ նամակս, երբ ստացա Ձեր մայիս 24-ին դրածը. պատկերները կստանամ այս շաբաթվա վերջին և կուղարկեմ Ձեզ. ինչպես առաջ էլ դրած էի, պատկերները բնագրավեստական կողմից թույլ են և

առանձին արժեք չունին, բայց հետաքրքրական են իրրե հայտնի տաղասացի և որոշ շրջանի անձնավորության գործ: Քանի որ ձեռագիրը Ձեր ձեռքը պիտի անցնե, այլևս իմ նկարագրություններն ու շափագրությունները կամ հիշատակարանների արտագրությունը Ձեզ համար միտք չունի (ես արտագրել եմ ինձ համար): Պատկերներն, ուրեմն, կուղարկեմ Ձեզ անմիջապես լուսանկարչից ստանալուց հետո: Ծախքի խնդիր լինել չէ կարող, չնչին բան է և երկուսս էլ նույն գործի համար աշխատավոր: Ուրախ եմ, որ Դուք որոշել եք Հովասափով դրադվիլ, ինձնից ավելի լավ կգնահատեք և կմատուցանեք ընթերցող հասարակության: Մի փոքրիկ տեղեկություն միայն պատրաստել եմ մեր «Արարատի» համար, հայտնելով Ձեր մտագրության մասին³:

Արդեն սկսել եմ ճիշտ նախահաշիվներ կազմել տալ իմ մանրանկարչական աշխատության համար. հավանորեն դարձյալ մի շարաքի աշատեղ եմ: Ապստլայցիզ կանցնիմ. շտապում եմ շատ, բայց աչդ չալետք է ի վնաս գործի լինի: Կերպարձս պետք է Պոլսի վրայով լինի, այնտեղից Սերաստիա և ավելի հեռու պիտի անցնիմ, եթե տերը հաջողե, ճանապարհորդությունս դարձյալ իմ մանրանկարչական աշխատության հետ կապ ունի: Գուցե ինձ ցուցումներ կարող էիր տալ կամ Սերաստիայում բարեկամներ հանձնարարել. շատ շնորհակալ կլինիմ: Այնտեղ ես միայն Սանասարյանի⁴ տեսուչ պ. Արույանին⁵ ծանոթ եմ, իսկ Քորգում Լպիսկոպոսը⁶, լսել եմ, Պոլսումն է այժմ:

Հայաստանի տեսուչների խնդիրը ձգձգվում է Պոլսում. բժիշկ Զավրյանը, երևի, Ձեզ էլ գրած կ'լինի յուր տեսակցության և ընդհանրապես գործի գրության մասին:

Հարգանքոր և սիրով ողջունում է

Ձեր Գարեգին վարդապետ

№ 7

1914, հունիսի 1, Հայպոլի

Սիրելի պարոն Չոբանյան

Ներողություն, Ձեր երրորդ նամակին անմիջապես պատասխանել չկարողացա, պատրաստվում էի Հայպոլիզ, իսկ աշատեղ գալուց հետո, առաջին երկու-երեք օրը դրադված էի բնակարան գտնելով, այցելություններ անելով և այլն: Այսօր ստացա Ձեր վերջին նամակը, մայիսի 28-ին գրված:

Նախընթաց նամակներից մեկի մեջ գրել էի, թե պատկերները մեկ շարաքից հետո կստանամ և կուղարկեմ հարկավոր ծանոթություններով և շափագրություններով. բայց տարադղաբար անհաջող էին, ինչպես լուսանկարիչ օրիորդն էր բացատրում թղթի վատությունից. պատվիրեցի նորից պատրաստել, նշանակելով այն բոլորը ինչ որ Դուք ցանկացել էիք: Արտատպությունն երկու-երեք օրինակ պիտի լինի, մեկը Ձեզ համար և մեկն ինձ համար: Ծախքի համար, կրկնում եմ խնդիրքս, հոգս մի անեք, ի սրտե կ'կամենայի ծառայել, ինչով կարող եմ: Առաջ մտադիր էի ինքս լուսանկարել, բայց մատենադարանապետը օրիորդին առաջարկեց և ես սիրով ընդունեցի այդ առաջարկությունը, ապատելով ինձ ժամանակի և աշխատության ավելորդ վատնումից:

Նկարները համոզված եմ Հովասափինն են, ինքն էլ յուր ձեռքով գրել է բացատրությունը պատկերների կողքին. բայց կան թվով ոչ շատ ուրիշ պատկերներ, որ Հովասափինը չեն և ավելի պակաս արժեքավոր են համեմատու-

թյամբ, դրանք նորոգողինն են, որի գիրը նոտր է, այն ինչ Հովասափը գրում է շեղագրին ավելի մոտ գրով կամ երբեմն բոլորգրով:

Ձեռագիրը տարաբաղադար, ինչպես երևում է, շուտ ստանալ շեք կարող. մատենադարանայետի օգնականներից մեկը հայտնեց, որ կարող է ամիսներ տևել, որովհետև նախարարության միջոցով պիտի ստացվի խնդիրքը և նույն ձանապարհով ուղարկվի ձեռագիրը¹:

Կաֆաների² կողքին տարաբաղադար ոչինչ չի գրված և ես այդ խնդրով չեմ զբաղվել, որպեսզի հիշողությամբ կարող լինեի որոշել հեղինակները: Ինչպես երևում է կաֆաները երկու հեղինակի են պատկանում. մեկը գրված է կարմիր, մյուսը կանաչ թանաքով: Ներփակյալ ուղարկում եմ Ձեզ Դարեհի մահվան կաֆաները³, որպեսզի ինքներդ որոշեք, թե Կեշառեցուն⁴ կամ Աղթա-մարցունն⁵ ե՞ն դրանք, թե Հովասափն էլ մասն ունի: Ինչ թվում է վերջինս կա-ֆաներ չունի: Ի դեպ հիշեմ, որ Աղեքսանդրի վարուց մի լավ օրինակ գտնվում է Նրուսաղեմում. տարաբաղադար համարն ասել չեմ կարող հիշողությամբ. բայց նշանակած եմ և նկարագրած տետրակներին մեջ: Հետաքրքրական է այդ նրանով, որ գրիչը Աղթամարցու պատվերով է գրում և նկարիչը Գրիգոր Աղ-թամարցին ինքը պիտի լինի: Գրիչը Վարագից լուսանցքներում շարունակ թրդ-թակցության մեջ է կաթողիկոսի հետ, նկարների տեղն է ցույց տալիս կամ ցուցումներ անում, թե ի՞նչ պիտի նկարվի և այլն: Այդտեղ կաֆաներն էլ գրե-ված են հեղինակների անունով⁶:

Պատկերները կստանաք, երևի, մի տասն օրից հետո, երբ կրկին Բերլին կվերադառնամ և կշարունակեմ Հովասափի արտագրությունը. բոլորը լուսա-նկարել տալ չեմ կարող. մանավանդ երկրորդական-երրորդական արժեք ունե-ցողները: Մինչև այն ժամանակ հազիվ կարողանա լուսանկարիչը պատրաստել. այս քանի օրերը տոներ էին և մատենադարանը փակված:

Այցելեցի ցուցահանդեսը, թեև շատ թուցիկ. տոներ էին, այնքան բազ-մություն կար, որ կարելի չէր հանգիստ դիտել: Այսօրվանից մի քանի օր կնվի-րեմ այդ գործին, հետևել միասին հարկավոր տեղեկություններ քաղելով գոր-ծիս տպագրության մասին: Բերլինում Albert Frisch-ը՝ 34000 մարկի վերջնա-կան նախահաշիվ ներկայացրեց, 30000 գունավորների և 4000 միագույն տախ-տակների համար, զրեցի Պետերբուրգ, այսօր վաղը պատասխան կստանամ և անելիքս ավելի որոշ կլինի:

Կոմիտաս վարդապետին սիրո համբույրներ. ես կարծում էի նորան Պո-լիս կտեսնեմ. մինչև ե՞րբ կմնա, Թերլեմեզյանն այնտե՞ղ է թե նա էլ է եկել: Այնտեղ մտադիր էի մի դասախոսություն կարդալ գրչության արվեստի մա-սին, դրանց օգնության և խորհուրդներին պետք ունեի: Թող զրե ինձ:

Սիրո ողջունիվ

Ձեր Դարեգին վարդապետ:

Հասցեն՝ Leipzig, Insel str. 121

Դարեհի մահումն կաֆաներ

52 ա. ա) Կարմիր քանափով

Յորժամ շարին ի յետ քակի
յուշ թողու որ ընկնի ոլոր
ցուցնէ զկապիճ շարին

Թէ՛ դայդ լիցի հոք-ից (?) նոր.
տանի հանց կապի ածէ
զինչ Դարեհ յարենն ի մոլոր.
զի շունչն է ի վեր քաշել
որ յերեկ էր մեծ թաղաւոր:

Կից սրան, կանաչ քանաւով.

Աւաղ վիճակի բախտի արքայիս որ հանդիպեցա՛յ
չարիս որ դիպա Դարեհս ի յարեան ծովն լեղացա.
երենկ թէ՛ չէ՛ ծնել ու դիպել բանիս որ տեսա՛յ
Աչսար զիս ի յիս քաշեմ մեռանիմ ճարակ մի չկա՛.
Երբ Աղեկսանար զայս լսեց
հոգոց հանեալ և արտասուեց
զառ ի թիկամբ զնա պատեց
քղամիզաւն զնա ծածկեց:

52 բ.

է՛ շարիս ևս քեզ ոնց աւտաւմ
երբ շունիս զոք ոչ մաւաւոր.
Ոչ զաւլ և ոչ երգում ունիս
զի քո սիրտտ է խիստ նենգաւոր:
Զով որ կամենաս այսաւր կուգնես թաղաւոր
և վաղն ձգես յաշիչ հաւասար մոխրոյն և մոլոր:

№ 8

1914, հունիսի 5

Սիրելի՛ բարեկամ
պ. Զորանյան

Այսօր ստացա Ձեր հունիսի 4-ին դրած նամակը, ինչպես նախընթաց նա-
մակներին մեջ, այնպես էլ այժմ կրկնում եմ, որ Ձեր նշանակած բոլոր երևու-
թյանն ու պատկերների լուսանկարները կ'ստանաք. այդ մասին անհոգ մնացեք.
դրանց մեջն է նաև Մուշեղ Մամիկոնյանի՝ պատերազմական պատկերներն
ու կաֆաները, որ Ձեր գրելուց առաջ արդեն ընտրել էի ինձ համար: Եթե
կայացիդում ավելի մնացի, կ'դրեմ պատկերները այստեղ ուղարկեն, որպեսզի
Ձեզ հասնելիքն էլ փոստին հանձնեմ, իսկ եթե ոչ, հետևյալ շաբաթվա վեր-
ջերին ևս կրկին Բերլին կվերադառնամ և անմիջապես կուղարկեմ: Երուսաղե-
մի Աղեքսանդրի վարուց ձեռագրի տևտրակը մոտոս չէ, ուստի և տարաբաղդա-
բար մանրամասնություններ տալ չեմ կարող: Բայց պատկերների համար ասել
կարող եմ, որ թեև դարձյալ բարձր արվեստ չունին, բայց Բերլինի ձեռագրի
համեմատութեամբ ավելի լավ են:

Էջմիածնի հայտնի ձեռագիրները առանց պատկերների են, բայց միանգամ
պատկերազարդ մի ձեռագիր ևս, հիշում եմ, պատահել է, բայց շատ անշնորհ
նկարչի գործ, առանձին ուշագրություն չեմ դարձրել, չգիտեմ նկատողութուն-
ներին տևտրակի մեջ նշանակել եմ, թե ոչ: Այդ մասին Ձեզ միայն էջմիածին
դառնալուց հետո կարող եմ գրել:

Անտոնյանց հարց միաբանության² մատենադարանում աշխատել եմ կարճ ժամանակով, մոտ 600 ձեռագիր ունին. մեծարժեք, պատկեհավարդ ձեռագիրներ չունին, նրանց ունեցածը մի ավետարան է հին, պաշտ, բայց հետաքրքրական պատկերներով, որ ժ դարու գործ է համարվում. առանց թվականի է:

Եսայի Նչեցու Աստվածաշնչից³ հանած պատկերի վերին մասում, անմորուսը Մովսեսն⁴ է և առհասարակ այդպես է նկարվում նա ձեռագիրների մեջ. իսկ մյուսը Ահարոնն⁵ է ծաղկյալ զավագանը ձեռքին:

Աշխատությանս մասին կ'հաղորդեմ, երբ վերջնական կարգադրություն կլինի. առայժմ նյութերն եմ դասավորում, տախտակներ կազմում, որպեսզի ճիշտ նախահաշիվ կազմել կարելի լինի: Բայց շտապում եմ Ձեզ, ինչպես և Կոմիտաս վարդապետին, ուրախակից անել ինձ. Ձեզ գրել էի, որ տպագրության մի մասի ծախսը պակասում է և գրել էի այդ մասին իմ բարերարներից մեկին՝ Պողոս Ղուկասյանին⁶ և խնդրել, եթե հնարավոր է դյուրություն տա ինձ առանց մեծ կրճատումներ անելու նյութի մեջ, հրատարակել իրեն հատկացրած հատորը: Երեկ հեռագիր եմ ստանում, թե 25000 գերմանական մարկ տրամադրելի է աշխատությանս տպագրության համար: Այսպիսով նյութակա-նի հոգսից ազատ եմ Աստուծո հաջողությամբ և մնում է գործը զգուշությամբ և աշխրջությամբ առաջ տանել:

Պոլսում պատրիարքին⁷, Նորատունկյան⁸ էֆենդուն ծանոթ եմ. չեմ ճանաչում Հրանտ Ասատուրին⁹ և Գրիգոր Զոհրապին: Սեբաստիա անպատճառ պիտի գնամ, բայց էջմիածնից ինձ այնպես են շտապեցնում, որ չգիտեմ, թե Պոլսում մնալու և դասախոսելու հնարավորություն պիտի ունենա՞մ: Կոմիտասը թող գրե Թերլեմեզյանի հասցեն:

Սիրո ողջուններով

Ձեր Գաբեգիմ վարդապետ

№ 9

1914, հունիսի 18, Բերլին

Սիրելի բարեկամ

պ. Ա. Չոբանյան

Երեկվանից կրկին մի քանի օրով Բերլինումն եմ. հայ-գերմանական ընկերության¹ բացման հանդեսին մի համառոտ զեկուցում կարդացի հայ արվեստի մասին: Մի երկու օր էլ կմնամ, մինչև պարզվի, թե աշխատությունս այստե՞ղ, թե Լայպցիգում կտպագրվի: Արդեն բավական պարզ գաղափար ունիմ տպագրության եղանակների և համապատասխան ծախսերի մասին:

Հանգամանքից օգտվելով այսօրվանից աշխատում եմ մատենադարանում. տեղեկացա, որ ձեռագիրը Փարիզ չի ուղարկվի փչացած և կտրատված լինելու պատճառով: Ձեր նպատակների համար, կարծում եմ, իմ տված տեղեկություններն էլ բավական կլինեն: Ուղարկում եմ Ձեր խնդրած լուսանկարները. նկարած են բնական մեծությամբ և հետևը նշանակված են ձեռագրի երեսները:

Աղեքսանդրի վարքից նկարել եմ տվել չորս պատկեր, 11ա, 12ա, 28ա, և 36բ. մնացած երեքը Մուշեղ Մամիկոնյանի կյանքից են, մեծ դիրքով, 210ա, 211բ, 212ա: Մնացած պատկերները Ձեր խնդրած բնագիրներն են, բայց նսավելացրել եմ և Հովասափի գլխավոր հիշատակարանը, որ գրված է Աղեք-

սանդրի վարքի վերջում 103բ: Ուրիշ մանր հիշատակարաններ ևս կան մյուս գրությունների վերջերում, բայց ոչինչ նորություն չեն տալիս, երկուսը միայն Հովասափի ծնողների հիշատակություն ունին. արտագրում եմ նամակիս մեջ: Մի հիշատակարան էլ 255ա, բ, որ չեք նշանակել: 209բ և 220բ Մուշեղ Մամիկոնյանին նվիրված կաֆաներն են:

269ա—270բ Հովասափի ամենալավ երգերն են, զգացմունքով և պատկերավորությամբ, տարաբաղդարար բիշ են այսպիսիները:

296բ—297բ Հովասափի ընդարձակ և սիրուն կաֆաներից մեկն է, որի յուրաքանչյուր տունն սկսվում է «Աշխարհիս սահմանն է հանց» խոսքերով:

264ա—265ա «Վասն հանդերձեալ դատաստանին» մի առանձին հետաքրքրություն չունի:

149բ—150ա. Տէր աստված Հիսուս Քրիստոս, բարեխաւսութեամբ և աղաթիւք սուրբ առաքելոյն Յոհաննու Որոտման աւետարանչի քո ընտրելոյ, ողորմեա մեղապարտ և անարժան գրչի Յովասափ սարկավագի և ծնողաց իմոց տեր Թաթևոսին և Շահփաշային և ամենայն զարմից և այնոց (SIC) որք կարդան զբան մարգարէութեանս և ասեն. աստված ողորմի և հայր մեր յերկինք. ամէն:

Փառք ապէնիադին աստուծոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

162 ա. Որոյ (Յովսիմոսի) բարեխաւսութեամբն ողորմեսցի Քրիստոս աստուած մեղապարտ գրչի Յովասափի և ծնողաց իւրոց տէր Թաթևոսին և Շահփաշային և ամենայն զարմից և այն որ ասէ աստված ողորմի և կարդացողաց և լսողաց հայր մեր որ յերկինս:

Ձեռագրի մասին

Ms. Orient. Quart. 805, կաշեկաղմ $20,2 \times 14,5$ սմ. հաստ. 7 սմ: Թուղթ $20,7 \times 14,7$ սմ. Դիր. բոլորգիր, նոտրգիր, շեղագիր, $15\frac{1}{2} \times 11,2$ մի էջյան: Բոլորգիրն ու շեղագիրը Հովասափինն է, նոտրգիրը նորոգողինը, որ տեղ-տեղ կարկատել է, պակասը լրացրել և համապատասխան պատկերներ նկարել: Շատ չեն այդպիսի մասերը: Դրիչն է և նկարիչը Հովասափ սարկավագ Սեբաստացի:

Նկարազարդ են բացի Աղեքսանդրի վարքը նաև «Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» հատվածը, Մուշեղ Մամիկոնյանի պատերազմական տեսարաններով, «Վարք և պատմութիւն Նրինէ կուսին»:

Փամանակ. «չ թուականիս, Յդ. աւելորդի» = 1335 թ.: Տեղ. Սեբաստիա: Հանգամանք. վատ պահված, թերթերը տեղ-տեղ կտրատված, մանավանդ Աղեքսանդրի վարքի մասը:

Նիւրալիւր ողջուններով

Ձեր Դարեգին վարդապետ

№ 10

1914, հունիսի 28, Բերլին

Սիրելի բարեկամ

պ. Չոբանյան

Ձեր հունիսի 25-ին գրած նամակն ստացա այսօր, ես արդեն Ձեր նախընթաց նամակներից մեկի համեմատ ստուգել էի, որ Բերլինի ձեռագրի մեջ «Արժէ դէմ այս կեանքս» սկզբնավորությամբ խրատական չկա, գոնե Աղեքս-

սանդրի վարուց վերջում, քայց մոռացել էի գրել. ուրեմն 9-ը նորից նայելու պետք չունիմ:

«Ուտանաւոր վասն լինելիութեան արարածոց»-ը ունիմ ես լուսանկարած, բայց Ձեզ համար նորից լուսանկարել տալու ժամանակ տարաբաղադար չունիմ, նեղատիվներ էլ չկան այս նոր մեթոդով. որ խնդրեի արտատպելն և ուղարկելն, միայն մի օրինակ է պատրաստում, ամեն մի օրինակ նորից պիտի նկարել: Բայց հուսամ թե ժամանակ կգտնեմ իմ օրինակից տարագրելու և Ձեզ ուղարկելու: Իմ վերջին օրերն են ճերմակում, մատենադարան այլևս չեմ հաճախում, այլ ղեպաված եմ պայմանագրիս՝ մշակությամբ, հուսամ, թե երկուշաբթի կարող կլինինք ստորագրել և ես երեքշաբթի կամ չորեքշաբթի լայպցիգ կմեկնիմ, ուր երկու օր մնալու մտադրություն ունիմ. այնտեղ գրեցեր, եթե գրելու բան ունիք. ապա թե ոչ Վիեննա Մխիթարյանց վանքը, հարկինյանին² ինձ հասցնելու համար:

Վաղուց մտադիր էի Ձեզ հարցնելու, մոռացել եմ. երեք տարի առաջ Բեյրութից Փարիզ է եկել մի երիտասարդ Հաբեշյան աղջանունով. նա ուներ Կիլիկյան շրջանի գրամների մի ժողովածու, որ վաճառել կ'կամենար: Հաճեցե՞ր խնդրեմ, տեղեկություն հաղորդել նորա մասին, ես հույս ունիմ, թե հարկավոր գումարը կ'կարողանամ որևէ կերպով ձեռք բերել և նույն ժողովածուն գնել Մ. Աթոռի թանգարանի համար: Գուցե կ'կարողանաք լայպցիգ գրել, եթե ոչ Վիեննա: Մտադիր եմ, ընդհանրապես, էջմիածնում արվեստից և հնությունց թանգարան կալմելու համար մտքեր պատրաստել, գրավոր և բերանացի քալողություն կատարել առիթ կ'ունենամ գրելու Ձեզ այլ անգամ:

Գիտնական և մտավոր աշխատությունը և դոցա հետ կապված հաստատությունները պետք է էջմիածնում ավելի հոգացողության և հովանավորության արժանանան քան մինչև այժմ:

Ձեր հոգվածների համար Մառի մասին ի սրտե շնորհակալ եմ³. հուսով եմ «Հորիզոնը»⁴ այլևս աննպաստ հոգվածներ չի տալիլ, անձամբ երկար խոսել եմ խմբագրի հետ այդ մասին. գուցե կարող լինիմ ես էլ արձագանք տալ Ձեր հոգվածին «Բյուզանդիոն»-ի⁵ մեջ: Մառի դեմ մղված պայքարը ծայրահեղ էր հիմարության աստիճանին հասցնելու շարժում: Երանի թե Մայր Աթոռի բարձր իշխանությունը կամ լրագրության մեջ անմիտ աղմուկ բարձրացնող հերոսները իսկական գիտակցություն և սրտացավություն ունենային մեր հնությունները նշանակության մասին:

Պուսում կուղենայի դասախոսել. և՛ թե հնարավորություն լինի: էջմիածնից ամենայն սիրով պատրաստ եմ Ձեր հարցումներին պատասխան տալու Աղեքսանդրի վարուց ձեռագիրների մասին, կիսնդրեմ, միայն հիշեցնեք:

Գործիս մասին տեղեկություններ կհաղորդեմ, երբ պայմանագիրը ստորագրված կլինի. այսօր ժամանակս էլ սուղ է, տպագրան պիտի շտապեմ:

Անիի մասին նույնպես կգրեմ մի այլ առթիվ. իմ մտախոհության առարկաներից մեկն է այդ խնդիրը: Բայց ամեն տեղ հասնել կարելի չի լինում. մանրանկարչական աշխատության հրատարակությամբ մի ծանր հոգսից ազատված կլինիմ:

Սրտագին ողջուններով

Ձեր Գաբեգիմ վարդապետ

№ 11

1914, հուլ. 5, կայսրիք

Սիրելի բարեկամ

սր. Չոլանյան,

Ձեր վերջին նամակն ստացա Ռերլինում, ուր ավելի մնացի, քան ենթադրում էի, բայց զբաղված ճանապարհի պատրաստությամբ, չկարողացա Ձեզ պատասխանել։ Երկու օր այստեղ եմ բարեկամներին «Մնաս բարև» ասելու և նամակներ գրելու համար. երեքշաբթի երեկոյան կ'մեկնիմ Վիեննա, երկու օր ևս այնտեղ կ'մնամ Միսթարյաններին և սրոֆ. Ստրոիգովսկուն¹ այցելելու. ապա ուղղակի Պոլիս կանցնիմ, եթե գրելիք ունենաք, գրեցեք Թերլեմեզյանի հասցեով, կ'ստանամ։

Խոստացել էի մի քանի խոսք աշխատությանս համար գրել։ Պայմանն արդեն կնքված է և նոտարի կողմից հաստատված. տպագրությունը պիտի վերջանա 18 ամսվա ընթացքում։ Առաջիմ տպագրում են պատկերները, ամփոփված երկու հատորի մեջ, բայց մի ընդհանուր կազմով (Mappa) առաջին հատորը Մեծ Հայքի մանրանկարչությունն է, սկզբից մինչև ԺԴ դարու վերջը. Բ-ը Կիլիկյան մանրանկարչությունն ԺԲ—ԺԴ դարերը։ Գունավորները ղեկավարված են 28 տախտակի մեջ, 36×46 սմ մեծությամբ և միագույնները 60, յուրաքանչյուր տախտակի մեջ մի կամ մի քանի պատկեր, մեծության նայելով. միագույնների մեջ ավելի։ Տախտակների սկզբում պիտի մի ցանկ լինի ձեռագիրների համարների և ժամանակի ցուցումներով, երեք լեզվով, երեք հրատարակությունների համեմատ. 300 օրինակ ղերմաներեն բնագրի համար, 200 ռուսերենի և 500 հայերենի։ Բնագիրների տպագրությունը դարձյալ պատկերներով լուսաբանված բնագրի մեջ, կսկսվի մանրանկարչական ալբոմի տպագրությունից հետո։ Բայց ավելի վաղ, հավանորեն մինչ տարին լրանալը, կհրատարակվի 500 օրինակ միայն հայերեն աբխազական պատկերներն ու մանրանկարչական տառերը (սոքա կրկնված են մեծ աշխատության մեջ ևս) տասը գունատիպ պատկերներով. առաջինը «Արքայական-իշխանական զգեստը հայ արվեստի ու մատենագրության մեջ» վերնագրով, երկրորդը «Փառագիր կամ մանրանկարչական տառեր»։ Ամբողջ գործը մեծածախս է և թանկ կ'լինի, կ'կամենայի այս առանձին հրատարակությամբ նշանակված մասերը մատչելի դարձնել միջին հասարակության։

Մեկենասներս են 1. Տիկին Հռիփսիմե Ադամյան 5000 ռ. 2. Պ. Պողոս Ղուկասյան 25000 մարկ, մոտ 11 հազար ռուբլի և բժ. Սիմեոն Շահ-նազարյան² 1200 ռ., բայց նախապատրաստության համար մասամբ օգնել են տ. Սուքիաս արքեպիսկոպոս³ և Պետրբուրգի Հայոց եկեղեցիների խորհուրդը։

Ձեր հետաքրքրության համար այս տեղեկությունները գրեցի, բայց հարկ չկա այսպիսի մանրամասնություններով առաջիմ հասարակության հաղորդել։ Ուղարկում եմ շնորհակալությամբ «Բյուզանդիոնի» համարները։

«Ոտանաւոր վս լինելութեան արարածոց», եթե մի ոտանավոր եք կամենում, հեշտ է արտագրելը, բայց եթե ամբողջն եք կամենում, արտագրելու բան չէ այժմ, 24 թերթ է, Հին կտակարանի բովանդակությունը էական մասերով, Քրիստոսի ծննդյան և մանկության պատմությունը, հարությունը, ուր ստեղծագործակալն րան չկա համարյա. չեմ կարծում, թե Ձեզ համար որեւէ արժեք

ունենաւ Բայց, եթէ հարկաւոր է Ձեզ, գրեցեք Պոլիս, այնտեղից կուղարկէմ, որպէսզի օգտվելուց հետո՝ դարձյալ ինձ ուղարկեք՝ էջմիածին:

Սիրալիր ողջուններով

Ձեր Դարեգին վարդապետ

№ 12

1922, հունվ. 16, Ս. էջմիածին

Սիրելի բարեկամ

պ. Արշակ Չաբանյան

Ստացա Ձեր նամակը, որով Աղեքսանդրի պատմության մանրանկարներ էիք ուղել: Դուք բերանացի խնդրած եք եղել նույնը խորեն եպիսկոպոսին¹, բայց նա մոռացել է, և միայն այժմ, երբ առիթ ունեցա այս ծրարն ուղարկելու մասին նրա հետ խոսել, հիշեց որ նորան ևս մի բան բերանացի հանձնարարել եք, բայց մոռացել է հայտնել ինձ: Տարաբաղգաբար այժմ էլ ցանկալի չափով Ձեր հանձնարարությունը կատարել չեմ կարող. չունիմ լուսանկարչական ապակիներ, թուղթ, դեղորայք. շատ դժվար է նորը ձեռք բերել և այն էլ ոչ միայն նյութականի սղության պատճառով. այս վերջին մնացորդը, որ գործադրում եմ, գրեթե փչացած է և այլևս հնարավոր չէ նրանցով փոքր ինչ մաքուր գործ կատարել. պ. Թորամանյանի աջակցությամբ դժվարությամբ միայն կարողացանք այսքանն էլ պատրաստել: Ներողամիտ լինիք, ուրեմն, պակասությունները ոչ թե անփութության, այլ նյութերի պակասության և հնության արդյունք:

Մեր ձևեռագրեր²ն, ինչպես գիտեք, այստեղ չեն, թեև, որքան հիշում եմ, նրանց մեջ Աղեքսանդրի վարքի պատկերազարդ մի ձևեռագիր³ կար, այն էլ ուշ ժամանակի և ոչ արժեքավոր գործ. բայց այժմ այստեղ ունինք վարագիր⁴ բերված և շատ նկարներով դարձրված մի ձևեռագիր⁵, որից և լուսանկարների շորս պատկեր, ընտրելով լավագույնները: Պետք է հայտնեմ, որ սա էլ բարձր գործ չէ, բայց նկարիչը պարզ շտրիխներով կարողանում է արտահայտել որոշ դրություն և կաֆաների կամ բնագրի բովանդակության համապատասխան գործողություն. ուղարկած լուսանկարներից տեսնել կարող եք, թե մարդկանց և կենդանիների շարժումն ու գործողությունը հանված է բնական և կենդանի, ի հարկե, ընտրելագույններն են սրանք: Հակոբ նկարիչ⁶ տաղանդից զուրկ չէ, և լավ ծանոթ է պարսկական կյանքին, արվեստին և նորա մանրանկարչությունը պարսկականի դրոշմ է կրում: Ձեռագիրը գրված և նկարազարդված պիտի լինի 1544—1611 թթ. մեջ, ինչպես առիթ ենք ունեցնել պարզելու «Գրիգորիս Աղթամարցի» մեր հոգվածի մեջ («Արարատ», 1919 հունվ.-դեկտ.): Ի դեպ ուղարկում եմ Ձեզ այդ հոգվածի հետ և մի օրինակ Հովասափ Սերաստացի⁷:

Քանի որ չէի կարող Ձեզ Աղեքսանդրի պատմության ավելի բաղմամբիվ նկարներ ուղարկել, միտք ունեցա այդ պակասը լրացնել վանքերի, բարձրաքանդակների, մանրանկարների, փայտագործության և այլն պատկերներով և մասամբ դուրանով նպաստել Ձեր հրատարակելիք գրքի պատկերազարդության: Ներփակ ուղարկում եմ և պատկերների համառոտ բացատրություն, առանց չափերի և մանրամասնությունների ինկատի ունենալով նպատակը:

Մի քանի խոսք էլ, գուցե, իմ մասին կկամենայիք լսել. վատկից արդեն

այստեղ եմ. անցյալ տարվա դեպքերը, կրածս նեղություններն ու հոգեկան տառապանքները առանց հետեանքի չեն մնացել մարմնական և հոգական տեսակետներով: Աշխատում եմ մխիթարություն որոնել աշխատության մեջ. բայց ավա՞ղ, այդ էլ հնարավոր չէ ներկա պայմաններում այնպիսի ստեղծագործական բնույթով, որ աշխատավորի հոգեկան վայելքն է. այն փոքր արդյունքը, որ ստանում եմ այժմ, թե չի տալիս դեպի ավելի հեռավոր սավառակներ, մտածելով, թե անցնում է հասակս, մոտենում ժերությունս և չգիտեմ թե ե՞րբ պիտի գա այն ժամանակը, որ հնարավոր լինի տպագրությունը մատչելի դարձնել ընդհանրության: Իմ մանրանկարչական աշխատանքն ընկած է Բերլինում. չգիտեմ ի՞նչ վիճակի մեջ. Պոռչյանց նվիրված մեծ աշխատությունս 150-ի չափ պատկերներով պատրաստ է տարիներից ի վեր. երկարամյա ջանքերով և մանրակրկիտ ուսումնասիրությամբ գրված «Գրչության արվեստի» Ա և Բ մասերը, Ազիրերեկենք, ազգային և թարգմանական հին մատենագրության լեռաբերյալ կարևոր գյուտեր, Վաշուտյանների, Օրբելյանների, Մամիկոնյանների և այլոց վերաբերյալ առատ նյութեր ամբարել եմ և չգիտեմ պիտի կարողանա՞մ շահագործել գերեզման չիչած: Մի ուրիշ, մանրանկարչականից ոչ պակաս կարևոր և մեծածախս գործ սկսել եմ հայ ներկա տարադին և ժողովրդական դարդ ու դարդարանքին, արվեստին նվիրված գլխավորապես տաճկահայոց, որի տպագրությունն, ինչպես և մանրանկարչականինն ապահովված էր վերջին հնդավիտությունից առաջ, պատրաստ ունիմ վաթսուներից ավելի ջրաներկ, գունադարձ պատկերներ, չհիշած բազմաթիվ լուսանկարչականը. երկու մեծ հատորի չափ հավաքել եմ հիշատակարաններ, հարյուրավոր արձանագրություններ գրի առած և լուսանկարած... մի խոսքով, իրոք, անբավ զանձ ունիմ, և վախենում եմ, իդուր անցնի Երեսուն տարվա անդադրում աշխատանքս: Հնարավորության սահմանների մեջ շարունակում եմ, ի հարկե, դարձյալ աշխատանքներս. շարունակում եմ, որովհետև իմ հոգուն նոր բովանդակություն տալ չեմ կարող և ոչ էլ դատարկ հոգվով ապրել: Բայց առայժմ, դո՛ւնե, հույսս քիչ է, թե պիտի կարողանամ իրագործել, ինչ իմ երազն է եղել, երկար տարիների աշխատանքիս նպատակը: Երբ գրիչ առա ձեռքս, ամենևին նպատակ չունեի այսպիսի բաներ գրել, բայց ներքին մղմամբ այսպես դուրս եկավ՝:

Մեր խեղճ Գոմիտաս վարդապետի մասին այստեղ ավելի վատ լուրեր էին հասել. թերթերն արդեն դնահատականներ էին գրում. կարգադրված էր վանքում մինչև իսկ հոգեհանգիստ կատարել, բայց Ձեր նամակի հիման վերա, թույլ չտվի Անբաղդ մարդ:

Մոռացա Ձեզ գրել, որ աշխատանքներս, մատենադարանս, հնություններս իմ բացակայության ժամանակ, ժամանակի Լուսավորության կոմիտայի Աշոտ Հովհաննիսյանի և մի քանի բարեկամների ջանքերով գրեթե անկորուստ էին պահված և վերադարձիցս հետո ինձ հանձնեցին. կորել է միայն մի աշխատանք և մանր նկատողությունների թերթիկների ժողովածուն. նյութական կորուստս, թեև շատ զգալի, բայց աչքիս չի դալիս: Աշոտ Հովհաննիսյանի ժամանակ նշանակված էի նաև գիտական ինստիտուտի անդամ, բայց ներկա կոմիտարը հեռացրեց ինձ⁶, չկամենալով հոգևորականի հետ դործ ունենալ:

Թորամանյանցն այստեղ է և ընդունված է ինստիտուտի անդամ. հանձնարարեց ինձ ողջուն գրել Ձեզ:

Ձեր Գաբեգին եպիսկոպոս

№ 13

1932, հունիսի 14, Երևան

Մեծարդո բարեկամ
Ա. Զորանյան,

Շուտով երեք ամիսը կլրանա, ինչ եկել էմ ն. Նախիջևանից և անմիջապես սկսել ղբաղվել իմ դիտական աշխատանքներով։ Արդեն Մելքոնյան ֆոնդին՝ ներկայացրել էմ ձեռագիրների հիշատակարանների առաջին հատորը՝ Զ—ԺԳ դար. հուսագրում են, որ դրական մտքով որոշում կլինի և կհաղորդվի ինձ մինչև ամսույս վերջերը։ Երկրորդ հատորը պիտի ամփոփի ԺԴ—ԺԶ, իսկ երրորդը ԺԷ—ԺԸ դարերը, հատուկ անունների ցանկի հետ։ Ամբողջը կլինի մոտավորապես հարյուր մամուլ, և տպագրվելուց հետո կարևոր մի աղբյուր կլինի անցյալի բաղմակողմանի ուսումնասիրության համար։

Կաղմակերպվել է և արդեն սկսել է գործի անցնել մի նոր հաստատություն՝ Նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտ, որի նպատակն է երկրի անցյալն ուսումնասիրել՝ մնացորդների կամ հնագիտական արժեքների հիման վերա։ Առաջին հերթին կամենում է ձեռնարկել մեր վանքերի և հնագիտական իրերի հետ կապված արձանագրությունների հավաքման և հրատարակության՝ նմանահանություններով։ Դա կպահանջ անգնահատելի մի աղբյուր մեր հին շինարարության և կյանքի ուրիշ արտահայտությունների իրական ուսումնասիրության, եթե գործը հաջողությամբ ի գլուխ հանվի։ Որքան և երախտալիստ այդ մասի հին աշխատավորներին՝ Շահաթունյանին², Ջալալյանին³, Ալիշանին, բայց անհրաժեշտ գիտական պահանջ է նոր ի նորո ստուգել և պատմական արժեք ունեցողները՝ նմանությամբ հրատարակել։

Այս տարվա շինարարության մեծագործությունը պիտի համարել ղոնրի ուղղման ջրանցքի շինությունը, որ սկսվում է Երևանի հյուսիսային կողմից. կտրում է քաղաքի ամբողջ սարալանջը, անցնում է Զորագեղի միջով, բերդի տակով և դուրս գալիս դաշտը կալարանի մոտով։ Վիթխաբի աշխատանք է կատարվել և կատարվում է. հենց միայն այս հիշածս վայրերում փուլցված են ժայռեր, հուն պատրաստել և ջրանցքը երկու կողմից պարսպել, հատակը բետոնով ամրացրել, մինչև ամսույս վերջերս պետք է այն չափով պատրաստ լինի, որ ջուր կապել կարելի լինի և ղոնրի բաժնում երեք հազար հեկտարի չափ ցանված բամբակը ջրել։ Դիշեր ցերեկ աշխատանքը շարունակվում է և մեր առաջնորդարանի պատշգամբից ամենայն օր դիտում եմ այդ եռուզեռը։

«Առաջնորդարանի պատշգամբից» խոսքերը Զեզ համար պարզ կլինին, եթե հայտնեմ, թե արդեն չորրորդ շաբաթն է, որ աշխատում եմ Երևանի թանգարանում, հնագիտական և ձեռագրական բաժիններում, լուսանկարել եմ մեր աշվեսուի պատմության համար արժեքավոր մնացորդներ և ամբողջացրել փայտակերտության վերաբերյալ նյութերս։ Հույս ունիմ հնարավոր կլինի մինչև տարվա վերջը որևէ տեղ տպագրել առանձին հատորով։

Սեանի դռան մասին հողվածս տպագրվեցա՞վ արդյոք, լրացնելիք կունենայի, բայց ուշ է արդեն։ Խնդրեմ ուղարկեցեք Աբելյանի⁴ հասցեով ինձ հասցնելու համար։ Իսկ կտրոն այստեղ կարող եք ուղարկել։

Լավագույն լուրը վերջն եմ հաղորդում Զեզ. երկու օր առաջ արդեն ստորագրված է նոր կաթողիկոսի ընտրության թուղթը⁵. էջմիածնում դեռ ստա-

ցած չեն լինիլ և լրագրում էլ չկա տեղեկություն. ես իմացա մասնավոր, բայց ճիշտ աղբյուրից: Ընտրությունը նշանակված է նոյեմբերի 10-ին:

Սիրո ողջուններով՝ Ձեր Դարեգին արհեստագետ

Երև գրելիք ունենաք, էջմիածնի հասցեով գրեցեք:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№ 1

1. Հավանորեն խոսքը վերաբերում է իր «Ս. էջմիածին տաճարի պատկերազրույթունը Սիմեոն կաթողիկոսի ժամանակ» հոդվածին, և «Պատկերք մեծք, որ ի յորմոց կախին» նկարազրույթյանը, որոնք տպագրված են «Անահիտ» 1911 թ. № 3—4-ում (էջ 67—70), Ա. Զոսմանյանի «Հայոց եկեղեցական նկարչությունը» համառոտ ներածականով:

2. Այդ ժամանակ Գ. Հովսեփյանը եղել է Հռիփսիմի վանքի վանահայրը:

3. Խոսքը հայոց Տրդատ I Արշակունի թագավորի մասին է (66—մոտ. 75 թթ.):

4. Խոսքը Բաշ-Ապարանի մոտակայքում կատարված պեղումների ժամանակ Գ. Հովսեփյանի հայտնաբերած Տրդատի հունարեն արձանազրույթյան մասին է (տե՛ս Ростовцов, Апаранская греческая надпись царя Тиридата, Петербург, 1911): Վերոհիշյալ արձանազրույթունը ներկայումս գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

5. Ապարանի հրեմանի իշխաններից: Սրա գերեզմանի արձանազրույթունը նույնպես գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

6. Խոսքը Տրդատ I-ի Գառնիում գտնվող հովանոցի մասին է:

7. Հավուց Թառ կոչված վանքը (IX—X դդ.) գտնվում է Գառնիի ձորում, Աղատ գետի հովտում: Նրա «Ամենափրկիչ» փայտակերտ խաչը ներկայումս պահվում է էջմիածնի վանքում (տե՛ս Գ. Հովսեփյան, Հավուց Թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937):

8. Գրիգոր Մազիստրոս Պահլավունի (990—1058—59 թթ.) գիտնական, փիլիսոփա, լուսավորական և կրթական գործիչ: Կառուցել է Հավուց Թառի վերոհիշյալ Ամենափրկիչ վանքը (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Դ, Երևան, 1970, էջ 33—51):

9. Խոսքը «Գրիգոր Մազիստրոսի թղթերը» գրքի մասին է, որ հրատարակել է Կարապետ Կոստանյանը 1910 թ., Ալեքսանդրապոլում:

10. Խոսքը Մատթևոս Ի Բզմիրյան կաթողիկոսի օծման մասին է, որը տեղի չունեցավ նրա վերահաս մահվան պատճառով:

11. Բզմիրյան Մատթևոս Բ (Սիմեոն) արքեպիսկոպոս (1845—1910) — Պոլսի պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս: Ընտրությունը կատարվեց 1908 թ. վերջին, հաստատումը՝ ուսուկաւարության կողմից 1909 թ. մայիսին: Դեռևս չօծված մահացավ 1910 թ. դեկտեմբերի 11-ին, Վաղարշապատում:

12. Խոսքը Մ. Բզմիրյանի ժամանակ Հուսիկ վարդապետ Զոհրաբյանի ղեկավարությամբ կազմված կաթողիկոսական դիվանի մասին է, որի կազմի մեջ մտնում էին Մեսրոպ վարդապետ Մովսիսյանը, Խորեն վարդապետ Մուրադբեկյանը և Դարեգին վարդապետ Հովսեփյանը (տե՛ս «Արարատ» ամսագիր, 1910):

№ 2

1. Ակնարկում է «Անահիտ» հանդեսի համար իր խոստացած «Ամենափրկիչը» հոդվածը, որը լույս չտեսավ «Անահիտ» դադարեցման պատճառով:

2. Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան (1867—1956), բանասեր, գրող, թարգմանիչ: Ֆրիկի «Դիվանի» հրատարակիչը: Արխիվը գտնվում է Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Կյանքի վերջին տարիներին եղել է ամերիկահայ թեմի առաջնորդը:

№ 3

1. Ա. Զոսմանյանի «Հայ էջերը» (մեր նախնյաց բանաստեղծությունն ու արվեստը), որ պարունակում է հայ հին ու նոր անտիպ կամ մոռացված բանաստեղծության նմուշները, լույս է տեսել 1912 թ., Փարիզում:

2. Տե՛ս № 2 նամակի № 1 ծանոթագրությունը:

3. Եղյան Հայկ (1875—1918)— լուսանկարիչ, որը հիմնականում նկարել է պատմական հուշարձաններ, պեղումներից հանված իրեր և այլն:

4. «Ասահիտ» հանդեսն սկսել է լույս տեսնել 1898 թ. վերջերից Փարիզում, Ա. Զոպանյանի խմբագրությամբ:

5. «Պոռչյանց հիշատակներից» հոդվածը «Ոսկերչության արվեստի մի նմուշ ժԳ գարուն» վերնագրով տպագրվել է Գ. Լևոնյանի «Գեղարվեստը» 1911 թ. № 4-ում (էջ 37—44):

6. «Ենդարվեստ» գրական-արվեստագիտական-երաժշտական պատկերազարդ հանդես, լույս է տեսել 1908—1921 թթ., Թիֆլիսում. ընդամենը 7 գիրք: № 5-ը տպագրվել է Վենետիկում: Խմբագիր-հրատարակիչ՝ Դարեգին Լևոնյան:

7. Նկատի ունի ձեռագրերի հիշատակարանների իր հավաքածուն (2 հատոր), որն այդ ժամանակ չի տպագրվել: Դրանց մի մասը «Հիշատակարանք ձեռագրաց» վերնագրով տպագրվել է 1951 թ. Անթիլիասում:

8. Խոսքը վերաբերում է տառերի գյուտի 1500-ամյակի առթիվ (1912 թ.) Վաղարշապատում լույս տեսած «Շողակաթ» ժողովածուի մեջ (1913 թ.) Գ. Հովսեփյանի տպագրած «Քարտեզ հնագրության» ուսումնասիրությանը լուսանկարներով հանդերձ (էջ 170—214 + 143 պատկերներ):

9. Գ. Հովսեփյանը հիշյալ ալբոմը Բեռլինում տպագրելու համար գրել էր գերմաներեն լեզվով առաջարան, կատարել էր բոլոր նախապատրաստական աշխատանքները, հայթայթել էր նյութական միջոցները, սակայն առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով հրատարակությունը տեղի չունեցավ:

№ 4

1. Տե՛ս նախորդ նամակի № 9 ծանոթագրությունը:

2. Մասեհյան Հովհաննես Խան (1864—1931)— ականավոր շեքսպիրագետ, թարգմանիչ, դիվանագետ: Տարբեր տարիների եղել է իրանական կառավարության դեսպանը Գերմանիայում, Անգլիայում և Ճապոնիայում:

3. Միջնադարյան հայ քնարերգու, նկարիչ, վարքագիր և գրիչ (XVI դար):

4. Խոսքը Ալեքսանդր Մակեդոնացու մասին է (356—323 թթ. մ. թ. ա.), որի կյանքի և գործի պատմությունը, ըստ Հ. Տաշյանի, հունարենից գրաբարի է թարգմանել Մովսես Խորենացին: Հետազայում Խ. Կելառեցին այն համառոտել է. մի քանի միջնադարյան տաղերգուներ ու գրիչներ գրել են նաև կաֆաներ և նկարազարդել են այն (Ջաքարիա Եպիսկոպոս Գնունյանցը և ուրիշներ): Բեռլինի Ազգային մատենադարանի № 805 ձեռագրում հայտնաբերվել է Ալեքսանդրի պատմության ընդօրինակությունը Հովասափ Սեբաստացու ձեռքով, որն ավարտել է 1535 թ. և միաժամանակ նկարազարդել այն: Այդ ձեռագիրը և մանրանկարները արժանացել են Ա. Զոպանյանի և Գ. Հովսեփյանի ուշադրությանը: Ա. Զոպանյանն իր «Հայ էջերի» առաջարանում անդրադարձել է Ալեքսանդրի պատմությանը և հրատարակել նմուշներ «Ալեքսանդրու պատմության կաֆաներից» (էջ 86—90), որը քաղել է Փարիզի ազգային մատենադարանի № 290 ձեռագրից:

5. Հովասափ Սեբաստացիով հետաքրքրվել են Ղ. Փիրղալեմյանը, Ղ. Ալիշանը, Ա. Տեվկանցը, Գ. Զարբհանալյանը, Կ. Կոստանյանը, Մաուր և ուրիշներ: Ա. Զոպանյանը ևս իր «Հայ էջերում» հատուկ տեղ է հատկացրել Հ. Սեբաստացուն: Գ. Հովսեփյանի միջոցով ձեռք բերելով Բեռլինի Ազգային մատենադարանի № 805 ձեռագրի մեջ գտնվող նյութերը, Զոպանյանը նրանցից թարգմանել է ֆրանսերեն և տպագրել Փարիզում լույս տեսած «La Roseraie d'Arménie» 2-րդ և 3-րդ հատորներում (1923 և 1929 թթ.): Հովասափի մասին ուշագրավ տեղեկություններ կան նաև Գ. Հովսեփյանի 1914 թ. Զոպանյանին գրած նամակներում, որոնք պահպանվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (արխիվային բաժին, Գ. Հովսեփյանի ֆոնդ, № 96 թղթապանակ, վավերագիր 12/3):

№ 5

1. Նամակն անթվակիր է, թվագրում ենք ըստ փոստային կնիքի նշման:

2. Տե՛ս նախորդ նամակի № 5 ծանոթագրությունը:

3. Հայոց կաթողիկոս (353—373 թթ.)— Սահակ Պարթևի հայրը:

4. Խոսքը գրիչ, նկարիչ, Թադևոս քահանա Սեբաստացու (1477—1542) մասին է, որի 2 տաղերը պահպանվել են որդու՝ Հ. Սեբաստացու ինքնագիր տաղարանում: Տե՛ս Ե. Հովսեփյանի

«Հովասափ Սերաստացի» ուսումնասիրությունը՝ տպագրված էջմիածնի «Արարատ» ամսագրի 1918 թ. ապրիլ-դեկտեմբեր միացյալ համարում (էջ 226—261)։

5. Ֆրեդերիկ Մակլեր (1869—1938) — ֆրանսիացի անվանի հայագետ, որը նամակագրական կապեր է ունեցել հայ գիտնականների հետ։ Մակլերը 1914 թ. ֆրանսերեն լեզվով հրատարակել է «Հայկական մանրանկարչություն» վերնագրով գիրքը, որտեղ օգտագործված է Գ. Հովսեփյանի հավաքած հարուստ նյութերի մի մասը։ Տե՛ս Մեսրոպ վրդ. Մաքսուգյանի դրախտական վերահիշյալ հրատարակության մասին՝ տպագրված «Արարատի» 1914 թ. № 3-ում (էջ 272—276)։

6. Ակնարկում է «Զագարաց ժողովը» (1913 թ.), «Մաղաքիա արքայ. Օրմանյան և իր կաթողիկոսական ընտրություն» (1908—1911 թթ.), «Բովմա Մեծուփեցու կյանքը» (1914 թ.), «Խոտակերաց Ս. Նշան» (1912 թ.) և այլ աշխատություններ։

7. Տե՛ս 3-րդ նամակի № 8 ծանոթագրությունը։ «Գրչության արվեստի» պատմական մասը թեև պատրաստ է եղել, սակայն չի տպագրվել։

8. «Շողակաթ» հայագիտական ժողովածուն հրատարակվել է միայն մեկ անգամ (1913 թ.)՝ Վաղարշապատում, այլևս լույս չի տեսել։

№ 6

1. Ամսաթիվը ուղղված է ըստ փոստային կնիքի։

2. Խոսքը դարձյալ Հովասափ Սերաստացուն վերաբերող ձեռագրերի և մանրանկարների մասին է։ Վերջիններս ուսումնասիրելու և ֆրանսերեն լեզվով հրատարակելու նպատակով Ա. Զոպանյանը նամակով 1914 թ. ապրիլի 11-ին Փարիզից գրում էր Բեռլինում գտնվող Գարեգին վարդապետ Հովսեփյանին, խնդրելով նրանից համապատասխան նյութեր Ահա այդ նամակի տվյալ նյութին վերաբերող հատվածը։

«Հարգելի բարեկամ

Պերլինի Կայսերական մատենադարանին մեջ կա հայերեն նկարազարդ ձեռագիր մը (cod. Arm., n—100) Աղեքսանդրու վարուց հին հայերեն թարգմանության օրինակություն մը, զոր էատարված է Հովասափ Սերաստացի ԺԶ գարուն և որ զարդարված է բաղմաթիվ նկարներով։ Կփափաղիմ ունենալ այդ նկարների ամենեն գեղեցիկներուն 4—5 հատին լուսանկարը. աշխատություն մը ունիմ ֆրանսերեն, զոր պիտի հրատարակիմ ի մոտո, անոր համար պետք ունիմ այդ լուսանկարներուն, զոր պիտի հրատարակեմ նույն նյութին վրա ուրիշ նկարներու հետ» (Մատենադարան, Գ. Հովսեփյանի արխիվ, թղթապանակ 96)։

Զոպանյանի ցանկացածը տեսարաններ ու դեմքեր ներկայացնող մանրանկարներ են եղել, որոնք ընտրելով, Գ. Հովսեփյանը ուղարկել է նրան, իսկ վերջինս էլ այն հրատարակել է իր «Վարդենիք Հայաստանի» Գ հատորի մեջ, 1929 թ.։ Նույն նամակն ամբողջությամբ առաջին անգամ հրատարակել է Մատենադարանի աշխատակից Ավ. Աղամյանը «Բանբեր Հայաստանի արխիվներին» 1965 թ. № 2-ում (էջ 59)։

3. Նման հաղորդում չկա «Արարատի» մեջ։

4. Կարինի Սանասարյան վարժարանը հիմնադրվել է 1881 թ. Մկրտիչ Սանասարյանի ծախքով։ Այն 1912 թ. փոխադրվել է Սերաստիա և գոյատևել մինչև 1915 թ.։ Փակվել է մեծ եղեռնի պատճառով։

5. Խոսքը թիֆլիսեցի մանկավարժ և կրթական գործիչ Գևորգ Աբուլյանի մասին է (1856—1933), որը 1881—1912 թթ. եղել է Կարինի Սանասարյան վարժարանի տեսուչը։

6. Թորոզում եպիսկոպոս Գուշակյան (1874—1939) — բանասեր, արվեստագետ, թարգմանիչ։ Եղել է Սերաստիայի հայոց թեմի առաջնորդը, ապա՝ Երուսաղեմի պատրիարքը։

№ 7

1. Խոսքը վերաբերում է Բեռլինի Ազգային մատենադարանում գտնվող Հովասափ Սերաստացու ձեռագրերը ժամանակավորապես Փարիզ տեղափոխելու խնդրին, որը բավական ձգձգվել է և առիթ տվել գրելու այդ մասին։

2. Կաֆաները բանաստեղծական ձև են, հիշեցնում են մեր հայրենները։ Դրանք գրվել են հայ տաղասացների կողմից և մուտք գործել Աղեքսանդրի վարքի, Դարեհի պատմության, Պղնձե քաղաքի պատմության և այլ հին զրույցների մեջ։

3. Տե՛ս սույն նամակի հավելվածում գրված կաֆաները, որ Գ. Հովսեփյանը արտագրել և ուղարկել է Զոպանյանին։

4. Խոսքը XIII—XIV դդ. հայ անվանի տաղերգու, գիտնական, Կեչառիս վանքի միաբան խաչատուր Կեչառեցու մասին է։ Առաջին անգամ նա է կաֆաներ մտցրել Ալեքսանդրոս պատմության մեջ (XIII դար), որով ավելի հետաքրքիր ու գրավիչ է դարձրել նրա առասպելախառն պատմությունը։

5. Գրիգորիս Աղթամարցի Ա կաթողիկոս, XVI դարի բանաստեղծ-տաղերգու։

6. Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Հովսեփյանի «Գրիգորիս Աղթամարցի» (գրական-կենսագրական նոր նյութերով) ուսումնասիրությունը, որը տպագրված է էջմիածնի «Արարատ» ամսագրի 1919 թ. հունվար—դեկտեմբեր միացյալ համարում։

7. Հասանորեն Բեռլինի հրատարակչներից մեկը։

№ 8

1. Խոսքը Մուշեղ Մամիկոնյանի (սպարապետ) կողմից պարսից դեմ մղած պատերազմի հաղթական երթի առթիվ ստեղծված պատկերներին ու կաֆաներին է վերաբերում, որոնք գտնվել են Բեռլինի Ազգային մատենադարանում։

2. Խոսքը Վիեննայի Մխիթարյան միաբանության մասին է։

3. Ծայրի Նեֆի (մեռ. 1338 թ.) — ժամանակի համբավվոր գիտնականներից, նշանավոր բերական, մեկնիչ, թարգմանիչ, «Նուստի փիլիսոփայ», «Անյաղթ հոստոս», եղել է Գլադորի վաճառ-համալսարանի շատ հեղինակավոր վարդապետներից։ Նրանից մնում են Ս. Գրքի մեկնություններ, թղթեր, «Վիճարանութիւնք», «Մեկնութիւն բերականի»։

4. Նկատի ունի հրեաների առաջնորդին, որը, ըստ ավանդության, պետք է ժողովրդին առաջնորդեր Ավետյաց երկիրը։

5. Նկատի ունի Մովսեսի կրտսեր եղբորը, որը հակառակ Մովսեսի թվատությանը, ունեւ ճարտար լեզու։ Ըստ ավանդության, Ահարոնը աստծո պատգամները ինքն էր հաղորդում ժողովրդին, թաքնվելով Մովսեսի թիկունքում, որով պատրանք էր ստեղծվում, թե խոսողը Մովսեսն է։

6. Մուշեղի մեծահարուստ Ավետիս Ղուկասյանի կտակատարներից մեկը, որն ապրում էր Պետերբուրգում։ Վերջինս հատկացրել է Գ. Հովսեփյանին պետք եղած գումարը։

7. Խոսքը վերաբերում է Պոլսի պատրիարք, տիպրանակերտցի Զավեն Եպիսկոպոս Տեր-Եղիայանին։

8. Խոսքը օսմանյան կառավարության արտաքին գործոց և հանրային շինությանց նախարար Գաբրիել Նորատունկյանի մասին է (1859—1936)։

9. Հրանտ Ասատուր (1862—1928) — իրավաբան, արեւմտահայ առաջադեմ մտավորականներից, նշանավոր գրական-հասարակական և մշակութային գործիչ, լրագրող։

№ 9

1. «Հայագիւման ընկերությունը» հիմնվել է 1914 թ. առաջին կեսին, Բեռլինում։ Ընկերությունը հրատարակել է «Մեսրոպ» — բանբեր հայագիւման ընկերության (հայերեն-գերմաներեն) երկամսյա պարբերականը (խմբագիր՝ Գրիգորի)։ Ընկերության կազմկոմիտեի մեջ մտել են հայ և գերմանացի նշանավոր մտավորականներ, գրողներ, գիտնականներ, այդ թվում Ավետիք Իսահակյանը, դոկտոր Լ. Լեփսիուսը, Գրիգորի, բժ. Հայրանյանը, Հերման Զուդերմանը, պրոֆ. Մարկվարտը, Թոմաս Մանը, Քուրդ Արամը, դր. Լիպերմանը և ուրիշներ։ Գ. Հովսեփյանը հիշյալ ղեկուցումը կարդացել է գերմաներեն լեզվով։

№ 10

1. Խոսքը իր հայ մանրակարչության ուսումնասիրության հրատարակության առթիվ Բեռլինի հրատարակչական մարմինների հետ կնքելիք պայմանագրի մասին է։

2. Ներսես Ակինյան (1864—1963) — Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ-բանասեր։

3. 1914 թ. հայ պարբերական մամուլում (Թիֆլիսի «Հորիզոնում», Կահիրեի «Հուսարերի» մեջ) երևացել են հոդվածներ, որոնք ամբաստանել են պրոֆեսոր Մառին, որ նա Անիի պեղումներից հանված արժեքները իրր մտադիր է եղել տեղափոխել Պետերբուրգ։ Այդ առթիվ անվանի գիտնականին հղել են սպառնալից նամակներ Ա. Զոպանյանը հանդես է եկել Պոլսի «Բյուզանդիոն» օրաթերթի 1914 թ. № 5364 և 5365-ի մեջ «Պրոֆեսոր Մարք» վերնագրով հոդվածով՝ ի պաշտպանություն ակադեմիկոս Մառի։ Գ. Հովսեփյանի խոսքը վերոհիշյալ հոդվածների մասին է։

4. Հասարակական-գրական-քաղաքական օրաթերթ, լույս է տեսել Թիֆլիսում 1909—1918 թթ.:

5. Ամենօրյա հայերեն թերթ, լույս է տեսել Պոլսում 1896—1918 թթ.: Արտոնատեր-խմբագրապետ՝ Բյուզանդ Քեչյան և որդիք՝ Աշոտ և Պարույր Քեչյաններ:

№ 11

1. Յոզեֆ Ստրժիգովսկի (1862—1941 թթ.) — ավստրիացի արվեստագետ, ճարտարապետության տեսարան, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր: Ուսումնասիրել է հայ ճարտարապետության կոթողները, էջմիածնի ավետարանը և գրել «Die baukunst der Armenier und Europa» («Հայերի ճարտարապետությունը և իվրոպան») և «Edschmiatsin Evangelier» («էջմիածնի ավետարանը») աշխատությունները: Պրոֆ. Ստրժիգովսկին սերտ կապերի մեջ է եղել մի շարք հայ անվանի արվեստագետների հետ: 1889 և 1913 թթ. եղել է Հայաստանում: Իր ուսումնասիրություններում նա բարձր գնահատական է տվել հայ ճարտարապետությանն ու արվեստին:

2. Սիմեոն Շահնազարյան — բժիշկ, հասարակական-կրթական գործիչ, մանկավարժ: Մի շարք աշխատությունների հեղինակ:

3. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյան (1837—1914) — էջմիածնի միաբանության անդամներից, Գևորգյան ճեմարանի առաջին տեսուչը, մանկավարժ, կրթական գործիչ:

№ 12

1. Հավանորեն խոսքը խորեն Մուրադբեկյանի (1873—1938) մասին է, որը էջմիածնի միաբանության անդամներից էր, հետադաշում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս (1932—1938 թթ.):

2. Խոսքը Վարդա վանքի № 229 ձեռագրի մասին է, որը 1916 թ. Հայաստան է բերվել և ներկայումս պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի բաժնում, № 5472-ի տակ:

3. Խոսքը Հակոբ Զուղայեցի նկարչի մասին է (XVI դարի վերջ—XVII դարի սկիզբ):

4. Գ. Հովսեփյանի «Հովասափ Սեբաստացի» ուսումնասիրությունը առաջին անգամ տպագրվել է էջմիածնի «Արարատ» ամսագրի 1918 թ. ապրիլ-դեկտեմբեր միացյալ համարի մեջ (էջ 226—261):

5. Վերոհիշյալ աշխատությունների մի մասը տպվել է հայ պարբերական մամուլի էջերում, մի քանիսը՝ առանձին: Հեղինակի հարուստ և արժեքավոր արխիվի մի մասը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մի փոքրիկ հատվածն էլ՝ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

6. Հավանորեն խոսքը Պողոս Մակինցյանի մասին է:

№ 13

1. Մելքոնյան ֆոնդը հիմնադրվել է 1924 թ., Կահիրեում, Գրիգոր և Կարապետ Մելքոնյան եղբայրների նյութական միջոցներով: Նրանց ծախսով 1926 թ. նիկոսիայում կառուցվել է Մելքոնյան հաստատությունը, որտեղ բազմաթիվ որբեր են պատասպարվել և կրթություն ստացել: Այդ նույն ֆոնդից 1930-ական թթ. որոշակի գումար է հատկացվել Հայաստանին, որի միջոցով հրատարակվեցին մի շարք հայագիտական արժեքավոր ուսումնասիրություններ: Ֆոնդի տնօրենն էր նշանակված պրոֆ. Հովհաննես Հակոբյանը: Մելքոնյան ֆոնդի Հայաստանի բաժանմունքը դադարեց գործելուց 1937 թ.:

2. Շահխաթունյան Հովհաննես (1799—1849) — եպիսկոպոս, էջմիածնի միաբանության անդամներից: Գրել է «Ստորագրություն կաթողիկե էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայն ուղեկրական աշխատությունը, որի Ա և Բ հատորները լույս են տեսել 1842 թ. Վաղարշապատում:

3. Զալալյան Սարգիս եպիսկոպոս, նույնը՝ Հառան-Զալալյան (1810—1879), մանկավարժ, կրթական գործիչ: Եղել է էջմիածնի Սինոդի անդամ, Սանահնի վանքի վանահայրը, Թիֆլիսի հայոց առաջնորդը, Գևորգ Դ կաթողիկոսի տեղակալը: Գրել է «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» ուղեգրական աշխատությունը, որի Ա հատորը լույս է տեսել 1842 թ., իսկ Բ հատորը՝ 1858 թ., Տփլիսում:

4. Խոսքը նոր նախիջևանում ապրող գրող-գրամատուրգ Ալեքսանդր Արելյանի մասին է, որն Ա. Չոպանյանի ծանոթներից էր և աշխատակցում էր «Անահիտին»:

5. Խոսքը վերաբերում է երաժշտագետ Դեորդ Զորեքչյանին (1868—1954), հետադաշում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Դեորդ Զ: